ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20.11.2019թ.
ժամը 10^{00}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ. Հունանյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության գլխավոր մասնագետ Վ. Իրիցյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 Քանի որ 14.11.2019թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 20 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չուներ, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան):

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված)՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին.

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 20 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակցի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) և որոշեց վերջինիս հայտարարել ընտրված մասնակից որտեղ վերջինս ճանաչվել է 1 ին տեղ զբաղեցնող և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և և հոդվածի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10 րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 20 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ. քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12^{00} ն, ք. Երևան Բագրանյանի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Գ. Ուստյանը

Գնահատող Տ. Հունանյան

Գնահատող Վ. Իրիցյան

Գնումները համակարգող Լ. Թազայան